

ՅԱԽԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ., ՓԵՏՐՈՒԱՐ.

ԱՆՆՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Ա

1877 թուին Բ. Պատկանեանը հրատարակեց Հիրակացու մեղ հասած երկասիրութիւնները «Անանիայի Հիրակունեայ Մնացորդ Բանից» վերնագրով (Ս. Պետերբուրգ). «Արարատի» յաւելուածներում մտադիր եմ տալ հետզհետեւ Հիրակացու այն գրուածքները և պատուհիկները, որոնք չեն մտել Պատկանեանի յիշեալ հրատարակութեան մէջ. Այս նոր հրատարակելիքները մասամբ բոլորովին անձանթ են և մեր հին գրականութեան պատմութեան մէջ չմտած, մասամբ յայտնի են այս կամ այն բանասիրին (մասնաւորապէս Հ. Ա. լիշանին), բայց այսու ամենայնիւ հայագէտների մեծամասնութեան անմատչելի մնացած, Ի մի ամփոփել այս հատուածները անհրաժեշտ է թէ լեզուարանական, թէ պատմական և թէ այլ տեսակետներից, Բնագրատութեան կմնայ սրանց վաւերականութիւնը հերքել կամ հաւատել:

Ըռջիկայ փոքրիկ երկասիրութիւնը վերագրում ենք մենք Հիրակացուն հիմնուելով մի հնագոյն ժողովածուի վրայ, Այդ ձեռագիրը «Գէորգ Կաթողիկոսի Յուցակի» համար 102-ն է, մի նշանաւոր և ամենաթանկագին հնութիւն: Թուղթ, երկաթագիր, հայոց ՆԼ. (= 981) թուականի յիշատակարանով, իւր առաջին մասով դեռ աւելի էլ կանուխ գրուած, այն է՝ Հայոց ՆԻ. թուականին (= 971 Փրկչական), բաղմարովանդակ մի ձեռագիր, Այս 2-ի զխաւոր յիշատակարանները արդէն հրատարակուած են Հ. Յաչեանի ձեռքով (Մանր Ուսումնասիրութիւնք, Հետազոտութիւնք և Բնագիրք, Վիեննա, 1895, եր. 202 և յաւելուած), 2-ի մանրամասն նկարագրութիւնը գուրս կ'այ մեր մատենադարանի «Մայր Յուցակում»: Հատ ածգամ էլ դեռ մենք առիթ կունենանք վերագրանալ այս ձեռագրին՝ հրատարակելով նրա հրատարակուած մասերը, Ամբողջ ժողովածուն, սկզբից և վերջից թերատ, ունի ընդամենը՝ իւր այժմեան վիճակում՝ 383 յօդուած (ԾԱ—ՆԼԴ), 2-ի սկզբից պահասում է 50 յօդուած (Ծ): ԾԱ—ՀԳ յօդուածները ամբողջապէս թուում են լինել Հիրակացուներ, Յամենայն դէպս եր. 5ի ԾԳ-ը յօդուածի վերնագրում կարդում ենք Անանիայի անունը—«Անանիայի համարողի վասն ընթացից արեգական և այլն», ԾԿ, Ծե յօդուածների լեզուն պահասում են լեզուն պատառոտուն վիճակի պատճառաւ, 8-ը թերթի ամբողջ ստորին կեսը չկայ, 8ի երեսի սկզբնաւորութիւնն է յօդուած ԾԶ, «Հարցմունք և պատասխանիք յաղագս արարչութեան» վերնագրով, որ և մնում է թերատ, ինչպէս ասացինք թերթի ստորին կիսի բացակայութեամբ, 9-ը թերթից սկսուում է մեր հրատարակութիւնը, առանց վերնագրի և առանց յօդուածի թուահամարի (ԾԱ), Գժուար է ասել թէ արդեօք 2-ի նախնական վիճակում այժմեան 8 և 9-ը թերթերը միայն շարունակութիւն էին կազմում, Թերեւս կար այդ երկու թերթերի մէջ մի ուրիշ թերթ էլ, որ այժմ պահասում է, 2-ի Կժուար համարները՝ ստորին լուսանցքներում՝ համեմատաբար նոր են և վերջին կազմողին են պատկանում Այդ ժամանակ 2-ը արդէն այժմեան թերատ վիճակումն էր, Ահա կազմողի նստադիր յիշատակարանը, «ԱՅիմեն վարդապետն Ապարանցին յիշեցէ ի Բրիտոս», որ ետ կապել զգիրքս յիշատակ իւրն և ծնաւդացն իւրոց՝ հաւր Խաչատուրին և մաւր Նարնջին, թվ. ՌԼԿ. (2 եր. 37a, ստորին լուսանցք), Այս այն Յիմեն Ապարանցին է, որի Այապասնութիւնն ունինք (տպ. Էջմիածնի, 1870), Այսպիսով մեր հրատարակութեան վերնագիրը հաստատապէս և՛ թերեւս՝ սկզբնաւորութիւնը պահասում են, եր. 13ի և յետոյ՝ մեր այս հրատարակածին անմիջապէս կից՝ հետեւում են Անանիայի երկու ծառերը «Անանիայի Հիրակայնեայ Համարողի» վերտառութեամբ, Այդ ծառերը արդէն հրատարակուած են Պատկանեանից, եր. 4 և 15, Այս ծառերին հետեւում է (եր. 29a) դարձեալ մի փոքրիկ հատուած Անանիայից «Նորին Անանիայի» վերտառութեամբ, Սրանով վերջանում է ժողովածուի Հիրակացուն վերաբերեալ բաժինը:

Այս համառօտ նկարագրութիւնից երևում է, որ մեր հրատարակածը 2-ում Անանիայի գրուածքներից քաղուած հատուածների շարքումն է, սկզբից թերատ՝ բայն վերջից անմիջապէս կից Անանիայի ճառերին, Այս հանգամանքը կարող է մի անպարտաւար համարուել, որ այս գրութիւնն էլ Շիրակացու գրչին է պատկանում:

Այդ բանին երկրորդ ապացոյց կարող են համարուել գրութեան նիւթը և լեզուն: Հատ տեղ նոյն իմաստները գրեթէ միևնոյն բառերով կրկնուում են այս գրուածքի և Շիրակունու ծանօթ երկասիրութեանց մէջ, Բայց վերջնական և աւելի դրական ապացոյց այս գրութեան Շիրակացունը լինելուն դառնում եմ ես նոյն հեղինակի զլխաւոր երկասիրութեան (Յաւարտ. եր. 34) մէջ, Խօսելով լուսնի վրայ Շիրակացին իմիջի այլոց ասում է. «... ըստ աստուածային գրոց որ ասաց թէ արար լուսաւորս մեծամեծս ի նշանս, « ի ժամանակս յաւուրս և ի տարիս՝ յոյժ պիտոյ են մարդկան նշանք որ լինին ի լուսաւորացոյ, եթէ ոք ըստ կէտ սահմանին ոչ ելանիցէ օտարոտի քննութեամբ: զի որ միտ եղեալ քնտրեսցէ զգեղեցիկ փորձ նոցա՝ և ոչ խառնիցէ ի ներքս ամպարշտութիւն ազգի ազգի հնարագիտութեան, գտանին ի նշանաց անտի՝ զի վասն խոնարհ զժամանակն ցուցանէ, բազում անգամ վարդապետք լինին մեզ օգոյն պղտորութեան և դառնաշունչ սառնաւանդանաց:

ՅԱՂԱՅՍ ԱՄՊՈՑ ԵՒ ՆՇԱՆԱՑ:

Զի յերեկօրեայ (= յերեքօրեայ) ժամանակի յորժամ վշիտ երեկիցի, զյստակ պարզոյ յայտ առնէ, և Յորժամ ի մահիկ հղջիւրսն զնշան կարմրութեան կամ զմեղութեան ունիցի՝ ջուրք բազումք յամպոց յերկիր հիղուն, և հարաւ յորդաշունչ բռնութեամբ յօգս բարբառի: և Յորժամ շուրջ բակ ունիցի յամպոց՝ ջուրք բազումք յօգոց յերկիր առաքին, կամ զարամուր բքոց և զդառնացուցիչ հողմոց ամբոխելոյ յայտ առնեն:

Յորժամ յեղջիւրսն լուսնի կարմրութիւն և մթութիւն երևի՝ ջուրք բազումք հեղուն յերկիր և հարաւ յորդաշունչ յաւաքս բարբառի:

Յորժամ լուսնն բակ ունիցի յամպոց . . . ջուրք բազումք հեղուն յերկիր և կամ զամբոխումն աւգոց դառնաշունչ նշանակէ (տող 226—230):

Զի յընծայմանն լուսնի բազում անգամ յորժամ յստակ և խաղաղ իցէ օգն, յանկարծակի (խռովութիւնք) սաստիկ օգոց յայտնին ի նմա մրբկեալ, և ամպք ի վերայ ամպոց զիզանին յահ և յերկիւղ մեծի տազնապի, Եւ այսու ամենայնիւ յայտ է, եթէ նշանք որ լինին ի լուսաւորացոյ՝ ի շահ օգտութեան են երկրի, Նաւաւարն զգուշացի և այլն « (Հրատ. Պատ. եր. 51):

Խօսելով արեգական վրայ Շիրակացին ասում է.

ՅԱՂԱՅՍ ԱՄՊՈՑ ԵՒ ՆՇԱՆԱՑ:

Զի Յորժամ ընդ ծագել արեգականն մթագոյն ելանիցէ և արեան և կայծակն նշանակ ունիցին ճառագայթքն, ըստ փոփոխման խտտաշունչ օգոյն եթէ ի նոյն կերպարանս կայցէ, և օգն պղտորեալ և յուզեալ՝ ոչ յստակիցի, և զոյնն մթնագոյն՝ ոչ լըրթացի, և հողմք ևս խտտագոյնք յուզեցին, և ամպն ևս քան զևս յաւելցէ, զերկար խոնաւայուզից և զսաստիկ անձրեաց յայտ առնէ:

Յորժամ ընդ ծագել արեգականն մթագոյն ելանիցէ և նման արեան ունիցի զճառագայթքն՝ թե ի նմին յամիցէ և աւգն վիզեալ ոչ յիստակիցի, և ապա ևս քան զևս բազմանայցեն և աւգքն խտտաշունչ յաւելցին՝ զսաստիկ անձրեաց յայտ առնէ (տող 213—216):

Եւ Յորժամ յամպոյ յամպ մտանիցէ արեգակն, զջրմակիծ շող ամպոյն յերկիր առաքելով՝ զխոնաւութենէ օգոց յայտ առնէ:

Յորժամ արեգակն ջրմ շողիւք . . . և մանաւանդ ամպ յամպ մտանէ ջրմ ճառագայթիւք՝ զամպոց նշանակէ (տող 218—220):

« Եւ յորժամ ելանիցէ ծագումն զա-
« ռաջինն խանձելով՝ զառօրեայ անձրեածումն
« նշանակելով. »

« Եւ յորժամ ի մուտս զյետոյսն խան-
« ձիցէ զերկինս կարմրացուցանելով՝ զառօրեայ
« պարզոյ յայտ առնէ :

« Մեկնութիւն նշանաց եղև առաջին բա-
« նիւթք (Հրատ. Պատ. եր. 56) :

Այս օրինակներէրց պարզ երևում է որ նոյն իմաստները՝ գրեթէ միևնոյն խօսքերով՝ երբեմն նոյն իսկ բառացի կրկնուում են : Դեռ կարելի էր ուրիշ օրինակներ էլ աւելաց- նել : Բայց մեզ համար աւելի նշանաւոր են վերջին խօսքերը՝ « Մեկնութիւն նշանաց եղև առաջին բանիւթք » : այսինքն է թէ՛ նշանների մեկնութեան մի քանի օրինակներ բերելով Շիրակացին ընդհատում է իւր խօսքը, մատնացոյց անելով ընթերցողին մի ուրիշ գրուածքի վրայ : որ էր նշանաց Մեկնութիւն : անշուշտ աւելի ընդարձակ : ամբողջական : Այդ նշա- նաց Մեկնութիւնը նախընթաց էր Անանիայի « Յաղագս Երկնի » գրուածքին : ուստի և բաղ- դատութեամբ կարող էր կոչուիլ « առաջին բանք » : Ուրիշ խօսքով՝ Անանիան մի քանի օրի- նակ բերելով լուսնի : և մի քանի օրինակ արեգական նշանների : կարճ է կապու : առա- ջարկելով ընթերցողին դիմել իւր մի ուրիշ գրուածքին : նշանաց Մեկնութեանը :

Մենք այս վերնագիրն էլ կտայինք ներքեւի հրատարակութեանը : եթէ մեզ օգնու- թեան չհասներ մի ուրիշ ձեռագիր : « Վէորդեան Յուցակի » թ. 95 նոտարգիր ձեռագիրը՝ Խղթոց գիրք և ժողովածու : գրուած հայոց ՊԼԵՆՔԻԵ (1426—1476 փրկ.) թուին : ձեռամբ Մատթէոս գրչի : ունի մի հատուած : որ համարում է ներքեւի հրատարակու- թեան : Այդ համառօտութեան վերնագիրն է « Յաղագս ամպոց և նշանաց » որն և բոլոր հաւանականութեամբ ընդ- վերնագիրն էր : Յամենայն դէպս այս վերտառութիւնը բո- լորովին համապատասխանում է Շիրակացու երկատիրութեան բովանդակութեանը : Դնում ենք այդ համառօտութիւնը և խուսափելով երկարութիւնից : բաւականանում ենք նշանա- կելով իւրաքանչիւր ասութեան դիմաց ընդարձակի տողահամարները :

2 եռ. թ. 95, եր. 341 :

« ՅԱՂԱԳՍ ԱՄՊՈՑ ԵՒ ՆՇԱՆԱԿՆ »

Յորժամ ծագէ արեգակն ** և կայծակ լուսոյ : և առ նովա շիկագոյն ամպ լինի կամ մթագոյն՝ շիկագոյն : հոգմոյ նշանակ է : իսկ մթնագոյնն՝ անձրեոյ (= Ընդարձակի տող 65—66) :

Յորժամ ընդ ելանել արեգականն ամպ լինի ահաւոր : և ապա արեգակն ամպովն ա- հաւոր երևի : և վերանայ ճառագայթիւքն և լոկ բոլոր ելանէ՝ անձրև նշանակէ (Ընդ. տ. 73—75) :

Յորժամ արեգակն մեծ երևի ամպով՝ պարզ նշանակէ (տ. 76) :

Յորժամ ձմեռանի արեգակն դեղնագոյն երևի՝ պարզ նշանակէ (տ. 79) :

Յորժամ ընդ արևմուտս արեգակն ամպով առագաստեալ երևի՝ անձրև նշանա- կէ (տ. 84) :

Յորժամ արեգակն ճառագայթիցն (այսպէս) և առնովա շիկագոյն ամպ՝ ոչ է ալըն- կալութիւն անձրևի (տ. 88) :

Յորժամ կամի արեգակն ծագել և առ նովա շիկագոյն և հրագոյն ամպ լինի՝ աւրն ոչ լինի առանց անձրևի և ոչ ամպ առանց ցօղոյ (տ. 95) :

* Այլ ընթերցում : ուրիշ ձեռագրից : Դարձնալ յորժամ Լինիցի ծագումն զյառաջեան խանձելով զառօրեայ անձրեածումն նշանակէ :

** Թէ այստեղ եւ թէ յետոյ արեգակ բառը գրեթէ միշտ միևնոյն գաղափարագրով : ինչպէս որ Ընդարձակում :

Յորժամ՝ ընդ մտանել արեգականն ցաւդ հարկանի՝ անձրև նշանակէ (տ. 114)՝
 Յորժամ՝ կամար երևի ի վերոյ՝ անձրև նշանակէ (տ. 139)՝
 Յորժամ՝ մրջինն զձուն ի դուրս պեղէ՝ անձրև գայ (տ. 166)՝
 Յորժամ՝ մառախուղ ի վերայ լերանց անկանի՝ ամպոց և հողմոց նշանակէ (տ. 151)՝
 Յորժամ՝ շամանդաղ ձգի ի վերայ լերանց՝ պարզ նշանակէ (տ. 187)՝
 Յորժամ՝ աստեղք պաղպաղ երևին և շարժին՝ ընդ երկար անձրև նշանակէ (տ.)
 Յորժամ՝ ծիծուռնք զթևս իւրեանց ճախրեն՝ անձրև նշանակէ հողմով (տ. 157)՝
 Թէ զթևս իւրեանց ի ջուրս հասուցանեն՝ յուզմունք հողմոց և ամպոց լինին (տ. 157—158)՝
 Յորժամ՝ ահաւք կանչեն և զթևս ճախրեն՝ կարկուտ նշանակէ (տ. 170—172)՝
 Յորժամ՝ լուսինն .Գ. կամ .Գ. աւուրն սուրբ և վճիտ երևի՝ պարզ նշանակէ (տ. 4)՝
 Ապա թէ մահիկ եղջիրն մթալար թխութիւն ունիցի՝ անձրև նշանակէ (տ. 4—11)՝

Այս բոլորից պարզ է ուրեմն, թէ մենք որտեղից ենք առնում հրատարակութեանն ենթադրական վերնագիրը և ինչ հիմունքներով այս գրուածքը վերագրում ենք Շիրակացուն կամ ինչպէս մեր հնագոյն օրինակն անուանում է՝ Շիրակային Անանիա Համարողին։

«Ային» վերջաւորութեամբ ազգանուններ թէև հաղուագիւտ մեր հին մատենագրութեան մէջ, բայց կան, ինչպէս օրինակ Ընծային = Ընծայեցի, Հաբային = Հաբայեցի ևլն. (տես Ղազար Փարպ.)։

Մնում է մեզ մի երկու խօսք ասել Անանիայի այս երկասիրութեան արժանաւորութեանց և նշանակութեան մասին։ Ամենից առաջ հետաքրքրական է գրուածքի լեզուն, իւր բաղմամբիւ նոր բառերով, ասացուածներով և օտար բառերով։ Բովանդակութեան կողմից այս փոքրիկ գրութիւնը գլխովին տարբերուում է մեր սովորագիտական—աստղաբաշխական—աստղագիտական մատենագրութեան մէջ եղած բաղմամբիւ նման գրուածքներից։ Սա մի զուտ գիտական գրուածք է, բոլորովին ազատ աստղագիտական—ախտարական տարրից։ Միմիայն բնական—բնագիտական բացատրութիւններ և մեկնութիւններ են տրուած նշաններին։ Եւ այս մի շատ բացառիկ երևոյթ է, գրեթէ իւր տեսակի մէջ միակը, մեր հին մատենագրութեան մէջ, մինչդեռ նման բովանդակութեամբ բանաբաղմութիւնները հետագայ և յետին դարերում խճողուում են տգէտ և նախապաշարեալ դանդաղումներով։ Մի քանի օրինակ այս վերջիններից. «Իմաստասիրաց ասացեալ յաղագս լուսնի և արեգական. ի նաւասարդի թէ լուսինն խաւարի՝ շատ ձիւն գայ. ի հոռի եթէ լուսինն խաւարի՝ ելանէ թագաւոր մի յարեւելից և առնէ արիւնհեղութիւն ...» (Զեռ. 2026, 9)։ Ահա լուսինն ու արեւելից թագաւորը իրար հետ շաղկապուած։ Աւրիշ օրինակ աստղաբաշխական—աստղագիտական «ցուցմունքներից»։ «Յորժամ՝ յարեւմտից կողմն ամպ մնա մինչև ի վաղիւն՝ նշանակ է անձրևի։ Թէ ի մուտս արևուն ամպ խանձել տեսանես՝ անձրև նշանակէ։ Յորժամ՝ լուսինն նոր լինի կամ փուլ և կարմիր դառնա կամ մլարի՝ բերոյ նշան է ... Յորժամ՝ աստղ ցոլանա յարեւելից յարեւմուտս՝ թագաւորն պարսից և խուաց (?) պատերազմին, որպէս ասէ Անդրէաս իմաստասէրն։ . . Եթէ ի չորրորդ աւրն դրազմաստեղն գնակ տեսանես՝ զօրացն պարսից մեծ շարժումն լինի, ապա թէ ճապաղ՝ պարսից նուազութիւն և Հայոց բարձրութիւն» (Զ. Թ. 2024, 7)։ Եւ այսպէս անվերջ*։ Անանիայի սոյն գրուածքը, ինչպէս ասացինք, ազատ է բոլորովին աստղագիտական տարրերից։

Մնում է մի ուրիշ խնդիր. բնագիր է թէ թարգմանական այս «Թագագս ամպոց և նշանացը»։ Մենք հակուած ենք կարծել վերջինը, ոչ միայն օտար (յոյն) բառերի գործածութեան պատճառով—այդ կարող էր տեղի ունենալ և ինքնուրոյն հայ բնագրում—այլ աչքի առաջ ունենալով գիտողութեանց մի քանիսի անհնարաւորութիւնը Հայաստանում կամ նոյն իսկ Տրապիզոնում, ուր երկար տարիներ ապրել է Շիրակացին (օրինակ կղզիների մասին եղած գիտողութիւնը տ. 195)։

* Այդպիսի «ցուցմունքներ» կան եւ հրատարակուած Էփիմըրոնների, Ծրագահանների մէջ, սես օրինակ՝ Ծրագահան, տաւ. Երեսաւ, 1877, ճր. 267, 285։ Տես նաեւ Էփիմըրոն, Վենետիկ, 1796։ Այս հրատարակութեան մէջ կան հետքեր եւ մեր Ընդարձակիր, օր տես նշանք անձրեւաց, հողմոց, միդկաց եւ պարզութեան։ Ղուխը, ճր. 172։

Թէև մեր երկաթագիր 2-րդ հնութեամբ երևելի բայց անշուշտ աղատ չէ թերութիւններից և աշտատանքներից: Մի քանի կէտեր մտում են ինձ համար խնդրական, օրինակ տ. 146—8, իսկուհի և «և փիւկոս թաշտանների անունը: որ պէտք է լինին միևնոյն բանը ինչպէս որ պահանջում է աստիճանն ընդհանուր իմաստը: Թերևս պէտք է լինին առաջինը՝ իսկուհի, երկրորդը՝ իսկուհի? (= և փիւկոս): Փիւկոս յունարէն, եթէ չեմ սխալուում, նշանակում է իշամկը: Այս և ուրիշ միջին կէտերի բացատրութիւնը մտում է աւելի հմուտներին: Գուցարի է նոյնպէս, որ նոր ձեռագրեր երևան գալով լրացնեն թերին և ուղղեն վրիպակները: Մեր մատենագրանի մօտ 100 2-երի մէջ որոնցում Ընտնիա Հիւրակացուց հաստատենք կան, ինձ չլաջողուեց գտնել այս գրութեան մի ուրիշ օրինակ:

Գալուստ Տ. Մկրտչեան:

[ԱՆՆԵՒԱՅԻ ՀԻՐԱԿԱՅՆԻՈՅ ՀԱՄԱՐՈՂԻ]

[ՅԱՂԱՂՈՍ ԱՄՊՈՅ ԵՒ ՆՇԱՆԱՅՑ]

[ԺԸ]

[9a] ՅՈՐԺԱՄ • Գ. աւրեայ երեւի լուսինն եւ եղջերքն վերաձգեալ եւ յոտակ եւ սուրբ լինի՝ նշանակէ զազ պարզութեան: ապա թե սուրբ են եղջերքն եւ շիկագոյն՝ հոգմային նշանակեն: վասն խառնուածոյ սեան թանձր ամպոյն ի հայելիս պայծառութեան լուսոյն՝ շիկագոյն երեւի:

Յորժամ • Գ. աւրեայ լինի լուսինն արժան եւ պայծառագոյն լինել, ապա թե որպէս զ • Գ. աւրէն տխուր են եղջերքն եւ թանձր եւ ոչ սուր ձգեալ, այդ լիացեալ ծայրքն եւ ըթացեալ՝ նշանակեն հոգմ արեւմտեայ կամ անձրեւ: վասն զի թխացեալ ազն այնպէս ցուցանէ զեղջերան լուսնի:

Յորժամ • Գ. աւրեայ է լուսինն եւ եղջերք ոչ ի ներքս խոնարհեալ եւ ոչ յողնեալ արտաքս, այդ կանգուն վերաձգեալ՝ հոգմոց նշանակէ, վա[ս]ն որոյ խկրբանէ կանգնին եղջերքն վերաձգեալ յաւոյցն: օրպէս երեւի թե յաւոյցն ձգի ի վեր, ոչ թեթեւ հոգմոց նշան, այդ սեւաթոյր հոգմոց նշան, որ է հիւսիսային եւ լիւրեացի: ապա թե ի չորրորդումն նորին նման երեւին եղջերքն՝ առաւել նշանակէ զազոց սաստկութիւն, զի վասն ուժգնութեան ազոցն եւ ի • Գ. աւուրն կանգուն երեւին եղջերքն:

Յորժամ եղջերքն հարաւային խոնարհեալ՝ զհարաւ նշանակէ: եթե արեւմտեայ եղջերն խոնարհեալ՝ զարեւմտէ հոգմ նշանակէ: ապա թե յարեւմուտ կողմն ճապկեալ են եղջերքն՝ նշանակեն զհարաւոց հոգմ: վասն զի մղէ կանգուն եղջերն զլուսաւորութիւն ի հարաւոց յարեւմուտս եւ յարեւմտից ի հարաւ, եւ այսպէս երեւի եղջերն խոնարհեալ յոյն:

Յորժամ • Գ. աւրեայ է լուսինն եւ ամենայն բոլորն շիկա[9b]գոյն է՝ զլուսմունս ամպոց նշանակէ եւ զազոց: ապա թե շիկագոյնս աճեցեալ եւ հրացեալ՝ եւս առաւել քան դառալին[ն] լինի յազումն ամպոց եւ ազոց:

Յորժամ երկուցուն կողմանցն հասարակեալ լուսինն միտպէս եթե յաճուն իցէ եթե ի մաշս եւ եղջերքն հարթեալ եւ մէջ հասարակին լցեալ վասն զի սկսնու յեղջերացն եւ մաշի յեղջերացն, եւ սուրբ է գոյնն՝ զպարզ նշանակէ: ապա թե շիկագոյն՝ հոգմին նշանակէ զաւուրս ամառն այսու նշանաւ: ապա թե ի միոյ կողմանէ թխագոյն՝ յանկագոյն մասն ունի ամիսն:

Յորժամ նշան երեւի ի լուսինն • Գ. աւրեին կամ ի • Գ. աւրեին մահկաձեւ՝ եթե ի պարզոյ եթե յամպոյ յազման՝ մինչև զհասարակն լուսնոյն զնոյն նշանակեն ազոյն հիւթք: ապա թե ի հասարակէ լուսնոյն երեւի նոյն նշանն՝ մինչև ցգլուխ լուսնոյն նշան լինի: ապա թե դարձեալ նշան լուսնոյն ամառն ի գլուխն երեւի՝ մինչև ցհասարակն լուսնոյն մաշոցն նոյն լինի: դար-

ծան. Տող Կ. 8 եւն. լուսին, արեգակ, քանոց մեծ մասամբ գաղափարաբարձ են գրուած: Տ. Տ. արժան Ե. = արժան է, այլ եւ թե, Եթե, հազոյն ուղղագրութիւնը պահում ենք անփոփոխ: Նոյնպէս և եղջերք, եւ նման հին ձեւերը, տ. 20, 21, եւն. 27, հին ուղղագրութիւն է եւ երկուցուն • Ե. եւ ոչ թե վրեպակ:

ձեալ ի հասարակէն նոյն լինի նշան մինչև երիս աւուրս մահկաձեւ նոյն լինի:

Յորժամ ի լուսինն մլար լինի եւ յամենայն կողմանց զլուսինն թաղան-
 40 թեալ իցէ՝ եթե առ սակաւ սակաւ անաւորանայ մլարն եւ հալի թխագոյն
 երեւմամբ՝ զպարզ նշանակէ, եւ այսպէս ծանուցանէ զաւգոցն ժողով ա-
 նաւոր եւ զիւրահալ: Ապա թե լուսինն ի միոջէ կողմանէ մլարն պատառի
 եւ ձգի՝ հողմային հիւթից նշանակ է, եւ անտի լինի ձգումն հողմոյն՝ ուս-
 45 տի ձգումն մլարին եղեւ. ապա թե դարձեալ ի լուսինն մլար երեւի՝ նշա-
 նակէ յուզմունս ամպոց. վասն զի կրկնումն [10a] այս մլարի ի թանձրու-
 թենէ հիւթոց աւգոյն եղեւ, ապա թե երրորդ եւս երեւե[ս]ցի մլարն եւ
 թուխ՝ եւս գծնդակագոյն ցուցանէ զյուզմունս աւգոց, եւ այս երրորդ նը-
 շան է գծնդակ եւ առաւել պատճառ յուզման ձմերանոց:

Յորժամ առ արեգակամբ երեւե[ս]ցի նշան ջոլրեալ՝ յուզումն ամպոց
 50 լինի եթե հողմոյ է թե անձրեաց. քան զլուսինն այս զաւրաւորագոյնէ,
 զի եւ ճառագայթք արեգական ուժաւորագոյն են քան զլուսինի. քանզի ոչ
 կարեն ճառագայթք լուսնի հալել զաւգոցն ժողովեալ թանձրութիւն ամպոց:
 եւ այս [հիւթք] աւգոց արեգական յայտնապէս ցուցանեն զնշանս քան զլու-
 սնի, որք ճշմարտապէս հային ընդ արեգակն, յորմէ նշանաց մարթի ճա-
 55 նաչել որպէս լինի:

Յորժամ յարեւելից կողմանէ արեգակն երանգ երանգ երեւի որպէս
 թե հրագոյն եւ շիկագոյն եւ թուխ եւ կամ այդ ինչ գոյն հաստութեամբ՝
 զխռովութիւն աւգոց նշանակէ եւ չէ ակնկալութիւն պարզոյ:

Յորժամ արեգակն յիստակ երեւի եւ նորին նման յիստակ եւ անամպ
 60 գաւտին որ զարեգակամբն երեւի՝ նշանակէ զառաջիկայ աւրն պարզ լինել:

Յորժամ [ամ]ենայն կողմանց հարթ երեւին մուտք արեգական՝ հողմ՝
 նշանակէ, ապա թե արեգակն խուզեալ երեւի եւ ճառագայթք պատառեալ՝
 է որ յարեւմուտս եւ է որ ի հարաւ կոյս, եւ մէջն պայծառ եւսուրբ
 երեւի՝ անձրեւս եւ հողմս նշանակէ:

Յորժամ ընդ ելանել արեգական կայծակ լինի եւ առ նովաւ շիկագոյն ե-
 65 րեւի կամ թխագոյն՝ նշանակէ շիկագոյնն հողմ՝ եւ թխագոյնն անձրեւս,
 ապա թե է ինչ արեգակն որ շիկագոյն երեւի եւ է ինչ որ թխագոյն՝
 նշանակէ անձրեւս թխագոյնն եւ հողմս շիկագոյնն:

[10b] Յորժամ արեգակն մտանէ կամ ծագէ եւ ճառագայթքն յի-
 70 րեարս խոնարհեալ մղեալ յաւգոցն եւ զմի կողմն ընդ ծագելն կամ ընդ
 մտանելն հովանի ունի յամպոյ, եւ է զի ամենայն իսկ ըմբռնեալ յամպոյ
 լինի ընդ ծագելն եւ ընդ մտանելն՝ զայն աւուրս

Յորժամ յառաջագոյն քան զարեգական ծագել ամպ չափաւոր եւ
 անաւոր՝ եւ ապա արեգակն ընդ ամպովն վերանա[ւ] տխուր ճառագայ-
 75 թիւք, այնպէս զի լոկ բոլորն երեւե[ս]ցի՝ անձրեւ նշանակէ:

Յորժամ ընդ ծագել արեգակն մեծագոյն քան զսովորականն երե-
 ւե[ս]ցի եւ ընդ ելանելն սփռի եւ լայնանա[ւ], որպէս զի հալի ինչ, եւ
 առ սակաւ սակաւ ի վեր ելեալ փոքրագոյն երեւի՝ նշանակէ պարզ լինել:

Յորժամ ձմեռնային ժամանակի ի մուտսն դեղնագոյն երեւի՝ պարզ
 80 նշանակէ, եւ այս ի խտացեալ ամպոց եւ լուծեալ եւ յանաւոր աւգ փո-
 փոխեալ. եւ ի ճառագայթից ջեռեալ խոնաւ երեւեցուցանէ. որպէս զգաւ-
 տի ձգի եւ ճառագայթքն ընդ խոնաւն խառնին, եւ դեղնագոյն եւ կանաչ
 երեւի ընդ մտանել արեւու:

Յորժամ ամպ առագաստէ՝ թե թուխ են ամպքն եւ ընդ առագաստելն
 85 ճառագայթքն յամպն խառնին յերկո-ցունց կողմանց՝ նշանակէ զառաջիկայ
 աւրն անձրեւս լինել, զի վասն թանձրութեան ամպոցն թուխ երեւի:

46. «երեւեցի», ձեւը անելի արժանի է ուշադրութեան. մեր կարծիքով այս մի անցողական ձեւ է «երե-
 ւեցի» նագոյն եւ «երեւեցի» համեմատաբար նորագոյն ձեւերի մընէ: Երկաթագիր գրութեանց մէջ
 շատ յաճախ է պատահում այս մընի ձեւը: 35. «Եռագրում» «թիւք աւոյց», ուղղում ենք հիւրք, հե-
 տեւելով քննարկ 54, 46 տողերին: 78 2. «երեւեալ» 84 2. «որպէս զի գաւաթ»:

Յորժամ արեգական պատա[ր]ումն լինի եւ առանց ամպոյ մտանէ՝ եթե լինիցի[ն] առ նովաւ շիկապոյն ամպք՝ ոչ զցայգն եւ ոչ զյառաջիկայ աւրն չէ ակնկալութիւն անձրեւի:

90 Յորժամ արեգական ճառագայթքն տխրեալ մեզ երեւի[ն] եւ թխութեան նմանեալ, որպէս[11a] երբեմն մեզ խաւարչտագոյն երեւի[ն], եւ այս լինի արեգական խաւարչտանալոյ:

Յորժամ թանձր ամպ լինի առ նովաւ՝ յուզման ամպոց նշանակ է:

95 Յորժամ կամի արեգակն ելանել եւ առ նովաւ ամպք հրագոյն շիկապոյն եւ խիտ՝ նշանակէ զամպս, եւ ոչ լինին ամպքն առանց անձրեւի եւ ոչ աւրն առանց ցաւոյ:

Յորժամ արեգակն ելանէ եւ ճառագայթքն գոգցես թե յարեւելս կոյս ելանեն զբոլորակուն եւ խաւարչտագոյն լինի՝ ցուցանէ թէ յանաւոր ամպոց առագաստեալ լինի, եւ այս նշանակէ անձրեւ կամ հողմ. ապա 400 թե ճառագայթքն առաւել մրրկեալ երեւին՝ է՝ առանց ամպոյ նշանակէ:

Յորժամ առ արեգակամբ թուիս կամ մթար լինի՝ զխռովութիւն ձմեռանոյ նշանակէ, ապա թէ մաւտագոյն լինի մլարն՝ տեղատարափք լինին. վասն զի նշանակեն այս ամպք զթանձրութիւն աւդոց եւ գժուարահալութիւն: Որպէս ասացի՝ թե մաւտագոյն լիցի բակն բոլորեալ արեգականն 405 եւ գժուարահալ՝—յայտ է թե երիցս անգամ այսպէս ամպք շրջապատեն զարեգակամբն՝—մեծ ձմեռանոյ նշանակք են:

Յորժամ երեւի որ կոչի պատիղովն ամպ թանձր՝ ըմբռնեալ ժողովեալ յարեգական ճառագայթից, որպէս թե նորա նման երեւի եւ ընդ նմա գնայ՝ ակնկալութիւն է ձմեռանոյ. յայտ է՝ զի եւ այսպիսի ինչ վասն 410 առաւելութեան թանձրութեան ամպոց անհալ լինի, թե մաւտ առ արեգակամբն գնայ. եւ յորժամ ի հարաւոյ կողմանէ լինի այս պատիղովն՝ հարաւ ցուցանէ, եթե արեւմտից՝ արեւմտէ ցուցանէ:

Յորժամ մտանէ արեգակն երեւիուն եւ ցաւ արկանէ՝ առաւել անձրեւս նշանակէ զայն աւուրս քան զճագել արեգականն. եւ վասն այնր 415 լինի այնպէս, զի ի ճագել արեգականն ի ջերմութեանէ ի ցրտութիւն փոխի. իսկ երեւիուն վասն առաջիկայ գիշերոյն ցրտութեան ամպքն հաստատուն կան, վասն այնր զյուզմունս ամպոց նշանակէ:

Կ ՈՍՏԵՂՔ են որոց խառնակեալ ճանապարհք լինին գնացից, որ անուանեալ կոչի[ն] յարգող, եւ այս ճանապարհ թե սպիտականայ՝ հողմ ցուցանէ 420 յայնմ կողմանէ ուստի շարժեցան. ապա թե ի միւսմէ կողմանէ աստեղքն ոչ շարժեցան, այլ յայդմէ կողմանէ՝ խառնակ հողմ նշանակէ:

Տեղի է որ կոչի մնուր եւ այս ժողով իմն է, որ երեւի զամպ նման, եւ լինի առ պատենիք խեցեգետոյն եւ ֆ. աստեղք առ նովաւ՝ մի ի հարաւոյ եւ մի յարեւմտից, որ կոչեն էշս, եւ յորժամ պարզոյ ի վեր հայիս՝ յանկարծ 425 մնուրն չերեւի եւ նուազ աստեղքն՝ որ էշքն կոչին՝ երեւին—զյուզմունս ամպոց նշանակէ:

Յորժամ մնուրն թուիս երեւի եւ աստեղքն իրերաց նման՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ առ մնովն ֆ. աստեղքն որ կոչին էշք, եւ որ ի հարաւոյն է նուազագոյն երեւի, եւ որ արեւմտէն նորին նման սուրբ՝ հողմն նշանակէ արեւմտէ. ապա թե շրջի՝ արեւմտէն նուազագոյն լինի եւ հարաւայինն նորին նման լինի սուրբ՝ հարաւ լինի:

ԿԱ Յորժամ կայծակէ ի չորից կողմանց եւ ի նմին կողմանց ուստի կայծակէ՝ն հողմք լինին՝ զյուզմունս ամպոց նշանակէ. մանաւանդ որ ի ծովու նաւք են վտանգին: 455

Յորժամ սկիզբն գիշերոյ լինի եւ ամպ երեւի նման գզաթոյ՝ զխռովութիւն աւդոց նշանակէ:

Յորժամ կամարն ընդ արեւմուտս կրկին երեւի՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ որ եւ իցէ աստեղս տեսանես մլար թուխ՝ զյուզմունս
ամպոց նշանակէ:

ԿԲ

Յորժամ ի գլուխս լերանց[12a] շնդչիւնք լինին՝ հողմն նշանակեն:

Յորժամ՝ արագիւ ի ծովէ կողմանէ փախչի զարհուրելով եւ սուր ձայն
առնելով՝ զյուզմունս ամպոց նշանա[կէ]։ եւ վասն այնր փախչի, զի յա-
ռաջագոյն ճանաչէ ի խռովութենէ ծովուն:

Յորժամ պարզոյ կռիւիք ի մայրեաց թռչին ընդդէմ իրերաց զար-
հուրելով՝ նշանակեն զյուզմունս ամպոց եւ հողմոց, եւ փիւկոս այս հա-
ւիկ մի իլիկ, որ ի փոքր ի շնչմանէ շարժի:

Յորժամ մոմունք եւ սագք ի ցամաք ելանեն եւ զթեւսն կտուեն՝
զյուզմունս հողմոց նշանակեն:

ԿԳ

Յորժամ ի գլուխս լերանց ամպ ընդ երկար երկայնի եւ նուաղ եւ
երկայն երեւի՝ հողմ՝ նշանակէ:

Յորժամ պապիւք ի ծովէ ելանեն բազում՝ զմիմեամբք՝ հողմ՝ նշանա-
կէ. նման է որպէս որ յորոշտուեգ (Յ) ելանէ:

Յորժամ ծովային կամ գետային հաւք անդադար մտիւրդին, որպէս
թե հարթ ջրոյն լինիցին՝ անձրեւս նշա[նակէ]:

Յորժամ ծիծառունք առ լծովք թռչին ստէպ ստէպ եւ զթեւսն ի
ջուրն հարկանեն՝ զյուզմունս ամպոց նշա[նակէ]:

ԿԴ

Յորժամ գորտք առ միմեանս ժողովին եւ կռչեն՝ զյուզմունս ամպոց
նշանակեն. եւ են գորտք որ կռչին գիւղնիովնք ճամարտեն առաւել զժա-
մանակս եւ այնպէս մանրիկք են՝ մինչ տրդկունք կտեն զնոսայ:

Յորժամ աղաղանքք ձայն առնեն ընդ առաւաւտս՝ ձմեռն նշանակէ:

Յորժամ առ ծովեզերք թեւովք զջուրսն հարկանեն՝ զյուզմունս ամ-
պոց նշանակէ:

[ԿԵ]

Յորժամ արջառ յերկին գլխամբարձ է եւ հոտայ՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մըջմունք զձուս իւրեանց հանեն ի ծակուց՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մըջմունք ժողովեալք եւ յորմ նստիցին՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ ընտանի հաւք կտուին[12b] եւ մեծաձայն կռչեն՝ անձրեւս
նշանակեն:

Յորժամ ճայք զմիմեամբք շրջապատին եւ ճչեն՝ անձրեւս նշանակեն.
մանաւանդ ագռաւք յորժամ թռչին եւ միմեանց ձայնս առնեն՝ անձրեւս
եւ շանթս եւ կարկուտս նշ[անակեն]:

Յորժամ ճայք թանձր ձայնիւ ճչեն եւ թեւովք զաւգս հարկանեն՝
անձրեւս նշանակեն:

ԿԶ

Յորժամ ընտանի հաւք եւ ասղակտուցք եւ ձկնքաղք կտեն եւ ի բոյնս
գալով շարժեն զթեւս իւրեանց՝ յուզմունք ամպոց լինի:

Յորժամ արագիւք ի ծովակոյս իջանեն ձայն[իւ] անձրեւս նշա[նակէ]:

ԿԷ

Յորժամ ճանճք սրագոյնս խածանեն եւ զնոյն արիւն յորդորելով
ծծեն՝ զյուզմունս ամպոց նշանակէ:

Յորժամ խոնաւոյ գիշերի ի պատրուկէ ճրագաց կայծ ոստանի՝ ան-
ձրեւ նշանակէ. եւ զի առ պատրուկաւն հրեղէն բոլորաձեւ առ՝ անձրեւս
ձմերանի նշանակէ: Եթե ի պատրուկէն լոյսն չելանէ կանգուն, այդ է զի
ի մի կողմանէ կամ յերկոսեան կողմանս յայսկոյս յայնկոյս պղպղաց պէս
կողմանի՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մոմունք ամարանի ստէպ ստէպ թռչին ճախրելով՝ անձրեւս
նշանակեն:

Յորժամ շամանգաղ ձգի ի լեռնոտանէ եւ ծայրք լերանցն երեւի[ն]
յիստակ՝ պարզոյ նշան է:

ԿԸ

Յորժամ ի կասկարայս կամ ի պուտունս կայծակունք ժողովին՝ անձ-
րեւս նշանակեն:

Յորժամ կայծ ունի[ն] ինքեանս պուտունք որպէս կորեակ շուրջ զին-

քեամ [բ]ք՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ՝ անդունդք շրջանս առնուն եւ խորն պայծառ երեւի՝ հարաւ հողմ լինի:

195 Յորժամ՝ երկրի կամ կողոյ ծայրք զիմաւք ի ծովս կողմն են եւ քան զինքեան[ս] վերագոյն ամպ ունին՝ խառնակ հողմ նշանակեն:

Յորժամ՝ հարաւահողմ լինի, ուժգին եւ սաստիկ արկանեն զցաւդ, հիւսիսային հողմոյ նշանակ է լինել:

200 [13a] Յորժամ՝ յանդունդս երեւի որպէս փոշի եւ աւգ փոշեցեալ խարտեշութեամբ, այնպէս անաւորացեալ՝ որպէս թե չերեւի իսկ, նշանակէ հարաւ լինել:

կթ.

Յորժամ՝ շամանդաղ լինի զամառն՝ զարեւմտէ հողմ նշանակէ:

Յորժամ՝ ընդ երեկոյս կարմրութիւն լինի յերկին՝ զպարզ նշանակէ. եւ յորժամ ընդ առաւառս՝ անձրեւս նշանակէ:

205 Յորժամ՝ արեգակն յելսն իւր մթագոյն երեւեցուցանէ զճառագայթսն իւր՝ մեծ ամպոց յուզմունս նշանակէ:

Յորժամ՝ ամպ յամպ ընթանա[յ] յարեգակն եւ ամպն թանձրանա[յ]՝ զմեծ ամպոց նշանակէ:

Յորժամ՝ ի մտանել արեգակն ճառագայթս ձգտեցուցանէ վետ վետ՝ զամպոց յուզմունս նշանակէ:

210 Յորժամ՝ յարեգակն գաւտիք երեւին՝ նշանակէ զամպոց զթերին եւ զաւդոց շնչ[մունս]:

Յորժամ՝ ընդ ծագել արեգակն մթագոյն ելանիցէ եւ նման արեան ունիցի զճառագայթսն՝ թե ի նմին յամիցէ եւ աւգն վիզեալ ոչ յիստակիցի՝ եւ ապա եւս քան զեւս բազմանայցեն եւ աւգքն խստաշունչ յաւեցին՝ զսաստիկ անձրեւոց յայտ առնէ:

215 Յորժամ՝ արեգակամբ այլ արեգակունք երեւին՝ զհողմոյ նշանակէ:

Յորժամ՝ արեգակն ջերմ շողիւք՝ եւ ի վերայ գլխոյն որպէս հուր լուցանէ, եւ մանաւանդ ամպ յամպ մտանէ ջերմ՝ ճառագայթիւք՝ զամպոց նշանակէ:

220 Յորժամ՝ ընդ մտանել[յ] արեգական ամպքն կարմրանան, զոր ոմանք խանձումն ամպոյ ասեն՝ նշանակէ զպարզոյ:

Յորժամ՝ արեգակն ցաւդ շատ արկանէ՝ նշանակէ զերաշտութեան:

Յորժամ՝ աղեղն յամպս երեւի՝ զսաստիկ ամպոց նշանա[կէ] եւ փարատէ զխստութիւնն:

Հ

225 Յորժամ՝ լուսինն բակ ունիցի յամպոց, եւ մռայլ զարեգակն ունիցի՝ յամպոց ջուրք բազումք հեղուն յերկիր, եւ կամ զամբոխումն աւգոց դառնաշունչ նշանակէ:

Յորժամ՝ յեղջերսն լուսնի կարմրութիւն եւ մթութիւն երեւի՝ ջուրք բազումք հեղուն յերկիր եւ հարաւ բռնութեամբ յաւգս բարբառի:

230 [13b] Յորժամ՝ ամենայն աստեղք խառնակ երեւին՝ զանձրեւս նշանակեն եւ զթերին շնչումն եւ կարկուտս ի տեղիս տեղիս:

